

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
մայիսի 18-ի նիստի N 20
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ

Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպման

ԾՐԱԳԻՐ

Գերազանցապես մանր գյուղացիական տնտեսություններով
գյուղատնտեսական սեկտորի համակարգային ինովացիոն կառավարման

ժամանակակից արդյունավետ տեխնիկայի ներդրմամբ մեքենայացված
ծառայությունների համակարգված մատակարարման փուլ

(I փուլ)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- I ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՌԿԱ
ՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
- II ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ
- III ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ
- IV ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ
- V ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ
- VI ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
- VII ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ
- VII ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հանրապետությունում ներկայումս գործում են շուրջ 320.0 հազ.
գյուղացիական տնտեսություններ, որոնց հողատարածքները բաժանված են
շուրջ 1.2 մլն հողակտորների: Գյուղատնտեսության զարգացման և
արդյունավետության բարձրացման գործում առանձնակի կարևորվում է
ժամանակակից տեխնիկական և տեխնոլոգիական զինվածությունը: Խնդիրը
արդիական է, քանի որ ներկայումս գյուղատնտեսության ոլորտում առկա
գյուղատնտեսական տեխնիկական բնութագրվում է ցածր արդյունավետությամբ,
ծախսատարությամբ՝ կապված վերջիններիս բարձր մաշվածության,
սարքինության ցածր մակարդակի և պարտադրված պարբերական
վերանորոգման հավելյալ ծախսերի հետ: Ներկայացված ծրագիրը I-ին փուլով
միտված է սկզբունքորեն և հետևողականորեն լուծելու նշված խնդիրը,
հողօգտագործողներին համակարգային մոտեցմամբ մատակարարելով

համաշխարհային լավագույն որակի մեքենայացված ծառայություններ, դրանով նպաստելով նաև լավագույն գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրմանը Հայաստանում:

1. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2. Հանրապետությունում 1991 թվականի դրությամբ առկա էին 859 կոլտնտեսություններ, խորհտնտեսություններ և միջտնտեսային կազմակերպություններ, որոնք տնօրինում էին առկա գյուղատնտեսական տեխնիկայի գրեթե ամբողջ շարժակազմը, որի կազմում միայն տրակտորների թիվը ավելի քան 18000 հատ էր:

3. Ըստ որոշ գնահատականների՝ 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում առկա են տրակտորներ՝ 15239 միավոր, հացահատիկահավաք կոմբայններ՝ 1351 միավոր, տրակտորային կցասայլեր՝ 6195 միավոր, տրակտորային խոտհնձիչներ՝ 2112 միավոր, կերահավաք կոմբայններ՝ 421 միավոր, մամլիչ-բարձիչներ՝ 1738 միավոր, հատիկազտիչ մեքենաներ՝ 422 միավոր, տրակտորային շարքացաններ՝ 1884 միավոր, տրակտորային գութաններ՝ 3900 միավոր, կուլտիվատորներ՝ 2316 միավոր:

Հանրապետությունում առկա գյուղատնտեսական տեխնիկայի վիճակի վերլուծությունը ցույց է տվել, որ տեխնիկական միջոցների միջին սարքինության մակարդակը կազմում է շուրջ 79.0 %: Մասնավորապես, տրակտորների 78.4, բեռնատար ավտոմեքենաների 76.5, հացահատիկահավաք կոմբայնների 76.3, տրակտորային կցասայլերի 86.6, տրակտորային խոտհնձիչների 83.9, կերահավաք կոմբայնների 73.2, շարքացանների 84.9, գութանների 87.1 և կուլտիվատորների 84.2 տոկոսն են գտնվում տեխնիկապես սարքին վիճակում: Նշված տեխնիկայի շուրջ 93%-ը Խորհրդային Միության արտադրության են՝ բարոյապես և ֆիզիկապես մաշված (1976-1991թթ. արտադրության), իսկ մնացած մասը հիմնականում (1997-2010 թվականներին՝ Ճապոնիա, Չինաստան, Հնդկաստան) դրամաշնորհների և այլ միջոցների հաշվին ներկրված, 885 միավոր տարբեր մակնիշի տրակտորներ և 116 միավոր հացահատիկահավաք կոմբայններ: Այլ ծրագրերով ևս իրականացվել են որոշակի տեխնիկական մատակարարումներ: Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի որոշակի համալրման հետ մեկտեղ արդիական խնդիր է մնում նրա առավել արագ տեմպերով նորացումը: Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի վերազինման հարցում առկա դժվարություններն առնչվում են տեխնիկական շահագործող սուբյեկտների, սպասարկումների կարիք ունեցող գյուղացիական տնտեսությունների

Ֆինանսական սուղ հնարավորությունների, պահեստամասերի բարձր գների և այլ գործոնների հետ:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

4. Հանրապետությունում շահագործվող գյուղատնտեսական տեխնիկայի շուրջ 90%-ն օգտագործվում է 20 տարուց ավելի և վաղուց անցել է ամորտիզացիայի համար սահմանված ժամկետները: Գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածության հետևանքով կտրուկ ավելանում է նորոգումների և տեխնիկական սպասարկումների ծախսը, որի հետևանքով բարձրանում են նաև ծառայությունների սակագները: Ստեղծված իրավիճակը հանգեցնում է՝

- 1) գյուղատնտեսության մեքենայացման մակարդակի նվազեցմանը,
- 2) ագրոտեխնիկական պահանջներով նախատեսված մշակության և բերքահավաքի աշխատանքների ժամկետների խախտմանը,
- 3) գյուղատնտեսության մեքենայացված աշխատանքներում վառելիք-քսանյութերի ծախսի 25-35 % ավելացմանը,
- 4) նորոգումների և սպասարկումների ծախսերի ավելացմանը մինչև 50-65 % և ժամանակի կորստին,
- 5) մեքենայացված աշխատանքների (վար, ցանք, կուլտիվացիա, բուժում, բերքհավաք և այլն) սակագների մակարդակի բարձրացմանը 30-45 %-ով,
- 6) գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի ավելացմանը 8-12 %-ով,
- 7) գյուղատնտեսական մթերքների մրցունակության նվազմանը:

5. Մեքենատրակտորային հավաքակազմի վերազինման գործում առկա դժվարությունները հիմնականում պայմանավորված են տեխնիկական շահագործող սուբյեկտների և գյուղացիական տնտեսությունների ֆինանսական սուղ հնարավորություններով, ներմուծվող մեքենայացման միջոցների բարձր գներով, գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման մատչելի մեխանիզմների բացակայությամբ ու եղածների անկատարությամբ և այլն:

6. Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի գործունակ պահելու համար անհրաժեշտ է այն թարմացնել տարեկան 10.0 - 12.5 տոկոսի չափով, մինչդեռ 1992 թվականից ի վեր ներկրված սակավաթիվ տարատեսակ տեխնիկական միջոցները լիարժեք չեն ապահովել հավաքակազմի նորացումը, առավել ևս, որ մշակելի հողակտորների ներկայիս կտրտվածությունը, չափերը և մշակաբույսերի բազմազանությունը պահանջում են նաև հավաքակազմի տեխնիկական միջոցների տեսակների փոփոխություն: Գյուղատնտեսական արտադրությունն անհրաժեշտ չափով բավարարված չէ տեխնիկական միջոցներով՝ ինչպես քանակական, առավել ևս որակական առումով:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Ծրագրի նպատակն է համակարգային մոտեցմամբ հազեցնել գյուղատնտեսական ոլորտը ժամանակակից, արդյունավետ տեխնիկայով ու տեխնոլոգիաներով՝ առանց.

- 1) մշակվող հողատարածքների արհեստական խոշորացումների,
- 2) հողօգտագործողների կողմից կատարվող որևէ տեսակի ներդրումների,
- 3) պետական բյուջեից դոտացիոն հատկացումների և այլն:

8. Ծրագրի իրականացման առաջին փուլի նպատակներն են.

- 1) մրցակցային գներով առավելագույն թվով հողօգտագործողների ապահովել աննախադեպ բարձրորակ, արդյունավետ մեքենայացված ծառայությունների մատակարարմամբ, միևնույն ժամանակ ստեղծել ֆինանսական հենք՝ ծրագրի շարունակական ընդլայնման համար,
- 2) կոմպետենտությամբ, աշխատանքի և մատուցվող ծառայությունների որակով և ճիշտ ժամանակին մատուցմամբ, սխալների և բացթողումների նվազագույն մակարդակով հողօգտագործողների շրջանում ստեղծել աներկբա վստահություն ծրագիրը իրականացնող ընկերության նկատմամբ՝ հիմք ապահովելով հետագա փուլերի սահուն ներդրման համար:

9. Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- 1) Հաշվարկներով ընտրված ամենաարդյունավետ (հաշվի առնելով սահմանափակումները) գյուղատնտեսական տեխնիկայի և տեխնոլոգիաների մատակարարում (ցանկը առկա է, ցանկով նախատեսված տեխնիկան և/կամ դրանց համարժեքները 08.02.2017թ.-ի դրությամբ նույնպես առկա են մատակարարների պահեստներում),
- 2) միջազգային լավագույն փորձի և մասնագետների ներգրավմամբ կադրերի որակավորման անընդհատ բարելավման մեխանիզմի ներդրում,
- 3) համակարգային ինովացիոն կառավարում (ներկա ժամանակում օպերատիվ կառավարման ռեժիմ (աշխատանքներ, ռեսուրսների պահեստ և այլն)),
- 4) ժամանակակից անընդհատ կապ աշխատանքային խմբերի, ստորաբաժանումների միջև,
- 5) տեղորոշում,
- 6) պլանավորում,

- 7) էլեկտրոնային քարտեզագրում և տվյալների բազաների ստեղծում (կառավարում, վերլուծում),
- 8) շարունակական օպտիմիզացիա,
- 9) աշխատանքային արդյունավետության նորմատիվների և գնահատման համակարգ,
- 10) անընդհատ վերահսկողության համակարգ,
- 11) մշտական կապ և հասանելիություն հողօգտագործողների, օդերևութաբանական և այլ կառույցների հետ,
- 12) ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութերի մատակարարման անխափան սխեմա,
- 13) ծրագրին պետական մասնակցության չափի և ձևի հստակեցում,
- 14) ծրագրի ռիսկերի գնահատում և այլն:

IV ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

10. Ծրագիրը բաղկացած է իրականացման 6 փուլերից: Միայն առաջին փուլի ամբողջական և հաջորդող երկու փուլերի մասնակի ներդրման անհրաժեշտ կլինի նվազագույնը 270 մլն. ԱՄՆ դոլար: Սա հնարավորություն կտա ՀՀ մինչև 450 հազ. հա մշակվող տարածքներում մեքենայացված ծառայությունների կիրառման մակարդակը հասցնել 90%-ի՝ ունենալով ավելի քան 1 մլն. շահառու: Ծրագրի իրականացման հաջող մեկնարկի համար մշակված Պիլոտային ծրագիրը թույլ է տալիս առանց հետագա լրացուցիչ ներդրումների՝ ապահովել ծրագրի անխափան ագրեսիվ ընդլայնումը ինքնուրույն, հենց ծրագրի սկզբից: Այն պահանջում է 1,012 մլրդ. ՀՀ դրամ ներդրումներ, որոնց մոտ 76%-ը (0,77 մլրդ. ՀՀ դրամ) կուղղվի համաշխարհային ամենաբարձր որակի ու արդյունավետության տեխնիկայի ուղղակի գնմանը (ներդրմանը), իսկ մնացած մոտ 24%-ը (0,242 մլրդ. ՀՀ դրամ)՝ ծրագրի մեկնարկի ընթացքում անհրաժեշտ՝ կառավարման, կադրային, մատակարարումների, տեխնիկական, կրթական, կապի, տեղեկատվական, վերահսկողական ենթակառուցվածքների և հենքի ստեղծմանը: Ծրագրի իրականացման առաջին փուլը ներառում է և սկզբնավորվում է Պիլոտային ծրագրից: Ծրագրի հաջող մեկնարկի և արագ ընդլայնման համար մշակվել է կատարվելիք քայլերի մանրամասն ալգորիթմ և ցանցային պլան: Ծրագիրը նախատեսվում է սկսել նախապես ընտրված համապատասխան պարամետրերին բավարարող տարածքներում գարնանացան կամ աշնանացան (կախված ծրագրի մեկնարկի ժամկետներից) հացահատիկային մշակաբույսերի ցանքսի մեքենայացված ծառայությունների ամբողջական մատակարարմամբ: Ծրագրի ֆինանսավորման մեկնարկից մինչև ծառայությունների մատակարարման սկիզբը կտևի 1-2 ամիս, քանի որ՝

- 1) համաշխարհային լավագույն ընկերությունների հետ արդեն իսկ տարվել են երկարատև բանակցություններ նորագույն տեխնիկայի ձեռքբերման, նրա սպասարկման կազմակերպման, ուսուցման և մատակարարումների վերաբերյալ,
- 2) առկա է միջազգային բարձրակարգ համախոհ մասնագետների թիմ, որն ամբողջությամբ պատրաստ է կյանքի կոչել ներկայացված ծրագիրը՝ արդեն իսկ մշակված ծրագրային մեկնարկի ալգորիթմին համապատասխան:
- 3) ստեղծվել և առկա են որոշակի ենթակառուցվածքներ,
- 4) ընտրվել են ծրագրի մեկնարկի նախնական տարածքները,
- 5) ապագա շահառուների շրջանում անցկացվել են աշխատանքներ՝ պարզելու որոշ տեսակի ծառայությունների նկատմամբ հետաքրքրվածության աստիճանը և այլն:

11. Սկզբնական աշխատանքները կնրդգրկեն առնվազն 16000 հա հացահատիկայինների վար ու ցանքս, ինչը կազմում է 2016թ. ՀՀ-ում իրականացված հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ընդհանուր ցանքատարածությունների շուրջ 8,5%-ը: Մեկնարկի աշխատանքները հիմնականում կկատարվեն Արարատի, Արմավիրի, Սյունիքի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերի համեմատաբար լավ մոտեցումներ և կենտրոնացվածություն ունեցող հողազանգվածներում: Տեղերում նախապես կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մատակարարվող ծառայությունների նախատեսվող գները և որակը թույլ կտան ծրագրի մեկնարկում ընդգրկել լոգիստիկ, մոտեցումների և տեղաբաշխման տեսանկյունից առավել օպտիմալ հողազանգվածներ: Սա թույլ կտա հընթացս հղկել և կատարելագործել կառավարման համակարգը՝ նախապատրաստելով այն առավել բարդ խնդիրների լուծմանը: Բացի այդ, մեկնարկի առավել պարզեցման համար Պիլոտային ծրագիրը, բացի մեքենայացված ծառայություններից, չի նախատեսում որևէ այլ տեսակի նյութերի (սերմացու, պարարտանյութեր, թունաքիմիկատներ և այլն) և ծառայությունների մատակարարում: Որպես ծրագրի մեկնարկի ռազմավարություն՝ նախատեսվում է նախապես ընտրված տարածքների հողօգտագործողների շրջանում իրականացնել լայնամասշտաբ լուսաբանման և տեղեկատվական աշխատանքներ: Անհրաժեշտ է տեղերում կիրառական օրինակների վրա ցույց տալ ներկայացվող աշխատանքների բարձր որակը և արդյունավետությունը: Սակայն հաշվի առնելով հողօգտագործողների ներկայիս ցածր եկամուտը՝ պետք է փաստել, որ որոշիչը լինելու է մատուցվող ծառայությունների ցածր գինը: Ինչևիցե, ճիշտ ժամանակին ու բարձրորակ անհրաժեշտ բոլոր մեքենայացված ծառայությունների ապահովումը հանդիսանում է այս ծրագրի

կայուն զարգացման հիմնական գրավականը: Բացի հիմնական բազան, որը գտնվում է Երևանի Շենգավիթ վարչական շրջանում, ընկերությունը, ըստ անհրաժեշտության, որպես հենակետ կօգտագործի իր մասնակիցների պատկանող (այդ թվում և օգտագործման իրավունքով) Արարատի, Սյունիքի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում առկա այլ ենթակառուցվածքներ ևս:

Նախապես հողօգտագործողների հետ հնարավոր է կնքվեն ծառայությունների մատուցման նախնական պայմանագրեր՝ անընդհատ կապ պահպանելով նրանց հետ, հստակեցնելով ծառայությունների մատուցման կոնկրետ ժամկետները: Կոնկրետ ծառայության դիմաց վճարը անհրաժեշտ է գանձել տեխնիկայի դաշտում գտնվելու ընթացքում: Ծրագրի իրականացման նույնիսկ առաջին փուլում հնարավոր է նաև Ծրագիրն իրականացնող ընկերության, բանկի և հողօգտագործողի կամ ընկերության, մթերողի և հողօգտագործողի միջև եռակողմ համագործակցություն: Ծրագրի I փուլի հաշվարկները կատարելու համար ստեղծվել է մոդել, որը, հաշվի առնելով առկա սահմանափակումները, հնարավորություն է տվել հաշվել 1 հա-ի մշակման ինքնարժեքը տարբեր մակնիշների և մոդելների տեխնիկայի կիրառման պարագայում: Ելնելով ինքնարժեքի հաշվարկի արդյունքից՝ ավելի քան 20 լավագույն տեխնիկա արտադրող ընկերությունների մոդելային շարքերից տարբեր տեսակի ծառայությունների մատուցման համար ընտրվել են կոնկրետ մոդելներ (հիմնականում 2013-2016թթ-ներին շուկա մտած մոդելներ): Բացի այդ, հաշվարկային մոդելը թույլ է տալիս իրականացնել մեծ մակերեսով հողազանգվածների կենտրոնացված մշակման դեպքում անհրաժեշտ տեխնիկայի քանակի հաշվարկը, ինչպես նաև պահանջվող ներդրումների ծավալը: Մշակվել է նաև կոնկրետ մոդելի տրակտորների և դրանց համապատասխան կցորդիչների, կոմբայնների և այլ տեխնիկայի կիրառման դեպքում տարեկան մուտքային և ծախսային հոսքեր, ինչը թույլ է տվել իրականացնել ծրագրի երկարաժամկետ ֆինանսական արդյունավետության հաշվարկ: Ծրագրով նախատեսված տեխնիկայի յուրաքանչյուր մոդելի համար որպես մուտքային տվյալներ օգտագործվում են շուրջ 30 պարամետրեր, ինչը թույլ է տալիս համակողմանիորեն ուսումնասիրել ծրագրի տեխնիկական, նյութական, կառավարչական և ֆինանսական նրբությունները: Ծրագրի փորձարկումը: Փորձնական ճանապարհով արտասահմանում (Գերմանիա, Կանադա) ստուգվել է ծրագրում օգտագործվելիք ընտրված տեխնիկայի մոդելների կիրառման արդյունավետության համապատասխանությունը տեխնիկական անձնագրերում ներկայացված տվյալների հետ՝ հաշվի առնելով ՀՀ-ում առկա սահմանափակումները (մասնավորապես՝ հողերի փոքր չափս, ծանր գրունտ և այլն): Բացի այդ, մեդիադաշտի և համացանցի ուղղորդված ուսումնասիրությունը ևս բացահայտել է ծրագրում հաշվարկված ցուցանիշների ճշմարտացիությունը ապացուցող բազմաթիվ կիրառական օրինակներ: 16000

հա հացահատիկային մշակաբույսերի ցանքսի ծառայությունների մատակարարման համար ընտրված տեխնիկայի տեսակներով և քանակներով մատուցման մեկնարկի համար անհրաժեշտ սկզբնական ներդրումների ծավալը խիստ ամփոփ տեսքով բերված է աղյուսակ 1-ում: Աղյուսակ 1-ում ներկայացված հիմնական ծախսային բաղադրիչը տեխնիկայի ուղղակի գնումն է:

12. Պիլոտային ծրագրի հաջող մեկնարկի համար նախատեսվում է ներգրավել 88 աշխատակից՝ 433550 ՀՀ դրամ միջին ամսական աշխատավարձով (ներառյալ հարկերը), որոնց թիվը 2-րդ տարվա ընթացքում կգերազանցի 142-ի (միջին աշխատավարձը՝ 434020), իսկ 5-րդ տարվա ընթացքում կլինի ավելի քան 726 (միջին աշխատավարձը՝ 440075) (Տե՛ս, աղյուսակ 2.1 և 2.2): Ծրագրի մեկնարկի համար առկա է բարձր որակավորում և հեղինակություն ունեցող մասնագետների և մենեջերների թիմ: Այս կորիզի շուրջ է նախատեսվում ամբողջացնել աշխատակազմը:

13. Ծրագրի մեկնարկին հացահատիկայիններ (ցորեն) մշակող հողօգտագործողներին կմատուցվեն մեքենայացված ծառայությունների ամբողջական ցիկլ (մինչև 3 գործողություն): Այդ ընթացքում նախատեսվում է, որ հողը վարելու, դիսկավորելու, չիզելելու, հարթեցնելու, կուլտիվացնելու, կոնկրետ քանակով կոնկրետ հեռավորությամբ սերմը և պարարտանյութը ցանելու և հողի հետցանքսային մշակման (խտացում, ակոսիկներ) բոլոր գործընթացները կիրականացվեն միջազգային լավագույն ստանդարտներին համապատասխան: Ընդ որում, ծառայությունների մատուցման գներն առաջադրվելու են այնպես, որ՝

- 1) ինքնարժեքին ավելացվի շահույթի այնպիսի չափաբաժին, որը կապահովի ծրագրի անխափան անընդհատ ընդլայնում և շահառուների քանակի հնարավորինս արագ տեմպերով ավելացում,
- 2) լինեն մրցակցային, այսինքն՝ մոտ 30%-ով ցածր լինեն շուկայում մատուցվող նմանատիպ ծառայությունների գներից (որակի էական տարբերության պայմաններում) (Տե՛ս, աղյուսակ 3.1 և աղյուսակ 3.2),
- 3) միջնաժամկետ կտրվածքով բացառվի դրանց բարձրացումը (հաշվի առնելով այն, որ ծրագրի շարունակական ընդլայնմանը զուգընթաց հարկ է լինելու կիրառել նաև նվազ արդյունավետ տեխնիկա): Երկարաժամկետ կտրվածքով ծառայությունների գներն ունեն նվազման միտումներ՝ պայմանավորված կառավարման գործիքների կիրառելիության մեծացման, այսինքն՝ արդյունավետության բարձրացման հետ:

14. Ավելին, հաշվի առնելով ներկայումս հողօգտագործողներին հասանելի ցածր արդյունավետության տեխնիկայի գներն ու որակը՝ այն կլինի ավելի ցածր է, քան նմանօրինակ սեփական տեխնիկայի օգտագործմամբ

մեքենայացված աշխատանքների ինքնարժեքը (հաշվի առնելով ամորտիզացիան): Հետագա տարիներին այլ մշակաբույսերի, այդ թվում և կարտոֆիլի տնկման համար կներդրվի աշխարհում կիրառվող առավել արդյունավետ տեխնիկա, ինչը հնարավորություն կտա մատուցել այնպիսի ծառայություններ, որոնք մինչ այժմ ՀՀ-ում չեն կիրառվում, սակայն կարող են ապահովել բերքի աննախադեպ որակ և բերքատվության բարձրացում: Մասնավորապես ծրագրի շրջանակներում նախատեսված տեխնոլոգիաներ կիրառող շատ ագրոֆիրմաներ զարգացած գյուղատնտեսություն ունեցող որոշ երկրներում (Հոլանդիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա) ստանում են միջինում ավելի քան 9 տ/հա բերքատվություն ցորենի համար և ավելի քան 60տ/հա կարտոֆիլի համար: Իհարկե նման ցուցանիշներ ապահովելու համար բացի մեքենայացված բարձրորակ ծառայությունները, անհրաժեշտ են նաև սերմի (տնկանյութի), պարարտանյութերի, բուժումների, ոռոգման և այլ գործոնների համապատասխան մակարդակ: Ինչևիցե ծրագրի ներդրումը հնարավորություն կտա անընդհատ և հետևողական կերպով բարձրացնել վերը նշված գործոնների մակարդակը, հետևապես և բերքատվությունը: Չնայած դրան ծրագրի մեկնարկային տարիներին ծառայության մատուցման տարածքների միջին բերքատվությունը ցորենի համար կանխատեսվում է առնվազն 4 տ/հա իսկ կարտոֆիլը 60 տ/հա (քանի որ, կարտոֆիլի համար մեկնարկը նախատեսվում է ծրագրի իրականացման երկրորդ տարվա ընթացքում, ինչը հնարավորություն կտա ազդել ծրագրի շրջանակներում ընգրկված հողազանգվածների բերքատվության աճին նպաստող նաև այլ գործոնների վրա): Ծրագրի ընդգրկվածության աճի հետ միասին հացահատիկայինների բերքատվությունը ևս էականորեն կաճի, սակայն ծրագրի մեկնարկային 5 տարիների հաշվարկների համար ցորենի բերքատվությունը ընդունված է անփոփոխ:

15. Առաջարկվող բոլոր ծառայությունները կառաջարկվեն միայն կամավորության սկզբունքով՝ ի ցույց դնելով դրանց որակական հատկանիշները: Նման ծավալով, ձևով և սակագներով ծառայությունների մատուցման մեկնարկով և շարունակական զարգացմամբ ծրագիրն իրականացնող ընկերությունը կստանա բավարար շահույթ, ծրագրի շարունակական ընդլայնումը ապահովելու համար: Մասնավորապես, ծրագրի իրականացման հինգ տարվա արդյունքում միայն նորագույն տեխնիկայի ձեռքբերմանն ուղղված ներդրումներն կկազմեն ավելի քան 13,7 մլրդ. ՀՀ դրամ (Տե՛ս, աղյուսակ 6):

16. Միայն Պիլոտային ծրագրի կանխատեսվող ֆինանսական հոսքերի վերլուծությունը (միայն մեկնարկի ներդրումներով, առանց հետագա ներդրումների) ցույց է տալիս, որ մեկնարկից սկսած՝ 5 տարվա ընթացքում ծրագրի ներքին շահութաբերության շեմը (ՆՇՇ) կազմում է 29%-ը (Տե՛ս,

աղյուսակ 4): ՆՇՇ-ի նման բարձր ցուցանիշը պայմանավորված կլինի երկու հիմնական գործոններով՝

- 1) մատուցվելիք ծառայությունների գներում ներառված շահույթի չափաբաժնով,
- 2) տեխնիկայի որակական բարձր հատկանիշներով և դրանց կիրառման համար մշակված համակարգային կառավարման ալգորիթմի ներդրմամբ: Պլանավորվում է, որ ներդրման 5-րդ տարում ընկերության կողմից մեքենայացված ծառայությունների 100%-ով կապահովվի հացահատիկային և հատիկաընդեղենային ցանքատարածությունների առնվազն 122 հազ. հա (գարնանացան և աշնանացան միասին) և առնվազն 8000 հա այլ մշակաբույսեր (հիմնականում կարտոֆիլ) (Տե՛ս, աղյուսակ 5): Ուսումնասիրվել է ծրագրի ներդրման, կայացման, ընդլայնման ընթացքում շահերի հնարավոր բախումները ՀՀ-ում ձևավորված պայմաններում. առանց ծրագրի նպատակներից որևէ շեղման՝ նախատեսվել են միջոցառումներ՝ դրանք նվազագույնի հասցնելու համար:

17. ՀՀ կառավարությունը կարող է նպաստել ծրագրի Պիլոտային արագ մեկնարկին (մինչև 2017թ.-ի աշնանացանի աշխատանքների մեկնարկը), զուտ ապահովելով նախատեսված բարձրորակ գյուղատնտեսական տեխնիկայի **(ընդհանուր 700 մլն. ՀՀ դրամ արժեքով)** ներդրումը: Այդ ներդրումը, ինչպես արդեն նշվեց, առաջարկվում է իրականացնել հատկացնելով միջոցներ տեխնիկայի ուղղակի գնման համար, որը իր հերթին տրամադրել ծրագրի իրականացնող ընկերությանը վարձակալության և ձեռքբերման իրավունքով օգտագործման համար կամ օտարել ընկերությանը տարաժամկետ վճարման հնարավորությամբ կամ կողմերի համար ընդունելի այլ ձևով, ապահովելով ծախսված պետական միջոցների հետ վերադարձը կողմերի համար ընդունելի հավելավճարի հետ միասին, ի վերջո դառնալով ներդրված տեխնիկայի սեփականատեր: Այդ միջոցներով ներդրված տեխնիկան պատկանում է ներդրողին: Տեխնիկայի նկատմամբ սեփականությունը փոխանցվում է մասնավորին միայն դրա արժեքի (700 մլն ՀՀ դրամ) և հավելավճարի ամբողջական մարումից հետո:

18. Նախատեսվում է, որ վճարի առաջին փոխանցումը՝ 70 մլն. դրամի չափով կիրականացվի միջոցների ներդրումից՝ ձեռք բերված տեխնիկան ամբողջությամբ ընկերությանը տրամադրելու պահից, մինչև 12 ամսվա ընթացքում: Դրանից հետո ևս 3 տարիների ընթացքում՝ յուրաքանչյուր 12 ամսվա կտրվածքով ընկերությունը վճարում է գումարը հետևյալ չափերով՝ 240 մլն ՀՀ դրամ, 253 մլն ՀՀ դրամ, 363 մլն ՀՀ դրամ՝ ամբողջական առավելագույն գումարը կազմելով 926 մլն ՀՀ դրամ:

19. Միննույն ժամանակ Ընկերությանը հնարավորություն կտրվի ցանկության դեպքում իրականացնել գումարի/արժեքի վաղաժամ մարում՝ համաձայն Աղյուսակ 1-ի: Ընդ որում, նախատեսում ենք, որ տեխնիկայի փոխանցումը ընկերությանը պետք է իրականացվի միայն գումարների/արժեքի ամբողջական մարումից հետո: Մինչև աղյուսակ 1-ով սահմանված ամբողջական գումարը վճարելը կատարված բոլոր վճարումները հաշվանցվում են ամբողջական գումարի արժեքից:

Աղյուսակ 1

Ժամանակահատված	Մարման ենթակա ամբողջական գումար՝ ՀՀ դրամով
Տեխնիկայի հանձնման պահից մինչև 12 ամսվա ընթացքում	770,000,000
Տեխնիկայի հանձնման պահից 12-ից 24 ամսվա ընթացքում	826,000,000
Տեխնիկայի հանձնման պահից 24-ից 36 ամսվա ընթացքում	882,000,000
Տեխնիկայի հանձնման պահից 36-ից 48 ամսվա ընթացքում	926,000,000

20. Մինչև տեխնիկայի դիմաց ամբողջական մուծումների ավարտը (հնարավոր է նաև դրանից հետո), նախատեսվում է ապահովագրել տեխնիկայի խոտանման բոլոր ռիսկերը, ապահովելով պետական միջոցների հետվերադարձը ցանկացած պարագայում: Բացի այդ աղյուսակ 2.2-ից կարելի է տեսնել, որ ընկերությունը կարող է մեկնարկի առաջին 4 տարիների ընթացքում պետությանը մուծել մոտ 2,3 մլրդ. ՀՀ դրամ եկամտային հարկ:

21. Ծրագրի ժամկետները: Ծրագիրը երկարաժամկետ է. նրա ամբողջական (6 փուլեր) ներդրման համար կպահանջվի շուրջ 25 տարի (առկա են հաշվարկներ ծրագրի ներդրման առաջին 15 տարիների համար):

22. Ծրագրի մասշտաբայնությունը և նշանակալիությունը: Ծրագիրը ներդրման առաջին 15 տարիների ընթացքում ենթադրում է ավելի քան 270 մլն. ԱՄՆ դոլար ներդրումներ և ուղղակիորեն առնչվում է ՀՀ-ում շուրջ 320 հազար հողօգտագործող ընտանիքների (շուրջ 1 մլն մարդ) հետ: Պիլոտային ծրագրի հենց սկզբում 1,012 մլրդ. ՀՀ դրամ ծավալով ներդրումները թույլ կտան ներգրավել մոտ 10000 շահառու ընտանիք: Տեխնիկայի և տեխնոլոգիաների

նախատեսվող ծավալի և որակի ներդրումների օրինակներ Արևելյան Եվրոպայի երկրներում (այդ թվում և ՀՀ-ում) դեռևս չկան (բացառությամբ սահմանափակ թվով ուկրաինական և ռուսական օրինակների), իսկ գերազանցապես մանր գյուղացիական տնտեսություններ ունեցող երկրներում նման ներդրումներ չեն էլ ծրագրվում համակարգային մոտեցման բացակայության պարագայում՝ ֆինանսական արդյունավետության անբավարարության պատճառով: Ծրագրի ներդրումը թույլ կտա ամբողջովին փոխել ՀՀ գյուղերի արտաքին անհրապույր տեսքը, գյուղաբնակների կենցաղը, կենսակերպը և շատ այլ բացասական երևույթներ, կմեծացնի նրանց եկամուտները, հիմք կստեղծի հպարտանալու իրենց ապրուստով, նորագույն տեխնոլոգիաներով մշակվող սեփական հողով, բերք ու բարիքով:

23. Ծրագրի կոլեգիալությունը և միջազգայնացումը: Բարեբախտաբար, այս ծրագրի շուրջ հաջողվել է համախմբել շատ բարձր որակավորում, գիտելիքներ ու փորձ ունեցող լավագույն մասնագետների և մենեջերների: Բացի այդ, գիտենք, թե ում և երբ ևս պետք է ներգրավել: Այս հանգամանքը թույլ է տալիս վստահ լինել ծրագրի մեկնարկի բավարար կառավարելիության մեջ, քանի որ նրա հաջողությունը գլխավորապես կախված է հենց ծրագրի կառավարման որակից: Նախատեսվում է տեղայնացնել միայն համաշխարհային լավագույն տեխնիկական և տեխնոլոգիաները, ինչի համար նախատեսվում է միջազգային որակավորում ունեցող մասնագետների ներգրավում ինչպես կադրերի պատրաստման և վերապատրաստման, այնպես էլ փորձագիտական գնահատականներ և խորհրդատվություն ստանալու համար:

24. Մուլտիպլիկատիվ էֆեկտ: Լինելով ենթակառուցվածքային խոշորամասշտաբ նախագիծ՝ այս ծրագիրը թույլ է տալիս խթանել արտադրական կարողությունների աճը (օրինակ՝ ժամանակակից ոռոգման և պաշտպանիչ տեխնոլոգիաների, տեղերում բերքի տիպային պահեստների և սառնարանային համակարգերի), ներքին և արտաքին տրանսպորտային և լոգիստիկ կարողությունների աճը (ՀՀ-ից ծրագրի ներդրման առաջին 13 տարիների ընթացքում արդեն գյուղմթերքի արտահանումը կարելի է ավելացնել շուրջ 10 անգամ՝ գերազանցելով 1 մլն տոննան), ժամանակակից կիրառական գիտական մտքի աճը՝ ներքին թե արտաքին սպառման համար, գյուղական և արդյունաբերական տուրիզմի աճը (նոր տեսակի արտադրություններ, ժամանակակից անասնաբուժական համալիրներ, մաքուր, հրապուրիչ գյուղեր), նոր ֆինանսական (մասնավորապես՝ գյուղական ապահովագրության) գործիքների կիրառումը (պայմանավորված վստահելի տվյալների բազայի ստեղծմամբ, որակյալ ցանքաշրջանառությամբ) և այլն: Այս ծրագիրն ունակ է լուծել բազմաթիվ խնդիրներ՝ սկսած դեմոգրաֆիականից մինչև սննդի ապահովվածություն: Այն ոչ միայն ամբողջապես

կարդիականացնի գյուղատեսական տեխնիկան և տեխնոլոգիաները, այլև կայուն հենք կստեղծի դրա ինովատիվ շարունակականությունը ապահովելու համար:

25. Տեղաբնակների ներգրավվածություն: Տեղաբնակների շրջանում անցկացված հարցումները ցույց են տվել ծրագրի կողմից առաջարկվող ծառայությունների նկատմամբ հետաքրքրվածության և պահանջարկի բարձր մակարդակ: Դա բնական է՝ պայմանավորված առկա տեխնիկայի և տեխնոլոգիաների մաշվածությամբ, ցածր արդյունավետությամբ և շահագործման մեծ ինքնարժեքով: Ծրագրի իրականացնող ընկերության շառավիղային կառուցվածքը, ծրագրի ընդլայնմանը զուգահեռ, սպառման հիմնական կենտրոններին մոտ նախատեսում է հիմնակետերի ստեղծում՝ տեղաբնակների հավելյալ ներգրավման հնարավորությամբ: Բացի այդ, թե՛ բուն ընկերությունում, թե՛ օժանդակ տնտեսություններում կստեղծվեն բազմաթիվ աշխատատեղեր:

26. Ծրագրի անցումն ինքնաֆինանսավորման: Ծրագրի մեկնարկի համար նախնական ներդրումները, հասույթ ապահովող գների և ծառայությունների մատուցման ծավալների ընտրությունը կատարվել է՝ ելնելով անհրաժեշտ նվազագույնից, ապահովելու ոչ միայն ծրագրի ինքնաֆինանսավորումը, այլև նույնիսկ առանց հետագա արտաքին ներդրումների (նույնիսկ առանց փոխառու միջոցների, լիզինգի և այլն)՝ ծրագրի շարունակական, կայուն ընդլայնումը:

27. Նախագծերի իրականացման լավագույն միջազգային ստանդարտներ: Ծրագրի իրականացման բոլոր փուլերում նախատեսվում է ներդնել միայն համաշխարհային գերարդիական ու ամենաարդյունավետ տեխնիկան և տեխնոլոգիաները: Այս տեխնիկան և տեխնոլոգիաները հասանելի են միայն զարգացած գյուղատնտեսություն ունեցող խոշոր ագրոհամալիրներին: Մեր կատարած հաշվարկները ապացուցում են, որ նման տեխնիկայի և տեխնոլոգիաների ներդրում և շարունակական թարմացում ՀՀ-ում հնարավոր է միայն նմանօրինակ ծրագրի իրականացման ճանապարհով: Մասնավորապես, ծրագրով նախատեսվում է միանգամայն նոր գերժամանակակից տրակտորներն ու այլ գյուղմեքենաները համակարգի շրջանակներում օգտագործել առավելագույնը 10000ժ (4-7 տարի): Ուսումնասիրվել է համաշխարհային առաջատար ավելի քան 20 արտադրողների մոդելային ամբողջ շարքը, ծրագրի ներդրման առաջին փուլի համար ընտրվել են մեր պայմանների համար ամենաարդյունավետ մոդելները: Հաշվի առնելով նմանօրինակ տեխնիկայի պահանջարկի շարունակական աճը՝ նախատեսվել են դրանց սպասարկման, նորոգումների ենթակառուցվածքներ, որոնց հենքի վրա հետագայում գուցե հնարավոր կլինի կազմակերպել նաև հավաքման արտադրություններ:

28. Ծրագրի իրականացման առաջին փուլը, ըստ որոշ մասնագետների նախնական, մակերեսային (մինչ ծրագրի մանրամասներին ծանոթանալը) կարծիքի բավական նման է խորհրդային ժամանակներում գործած մեքենատրակտորային կայանների աշխատանքի սկզբունքներին: Սակայն ներկայացված ունի խիստ սահմանափակ ընդհանրություններ աշխատանքի կազմակերպման նման ձևաչափի հետ, և դրանք սահմանափակվում են սույլ մեքենայական ծառայությունների մատակարարման երևույթի նմանօրինակությամբ: Մնացած ամեն ինչում՝ տեխնիկական, տեխնոլոգիական, որակական, աշխատանքի կազմակերպման, կառավարչական, վերահսկողական, օպտիմալացման, կառավարվող օբյեկտի տարածվածությամբ, ծառայությունների ոչ պարտադիր՝ մրցակցային բնույթով և այլ շատ առումներով խիստ, արմատականորեն տարբերվում են նախկինում գործած համակարգից: Ծրագիրը միտված է հանդիսանալու միջոց փոքր սեփական հողակտոր ունեցող հողօգտագործողին հասանելի դարձնելու առավելագույն արդյունավետության տեխնիկա և տեխնոլոգիաներ, որոնք նրան որևէ այլ կերպ հասու լինել չեն կարող:

29. Հաջորդող փուլեր և զարգացման հեռանկարներ: Ծրագիրը նախատեսում է իրականացման 6 փուլ: Ընդ որում, այդ փուլերը ոչ միայն մեկը մյուսի տրամաբանական շարունակությունն են, այլև ներդրվելու են՝ նաև զուգահեռ նախորդող փուլի որոշակի մակարդակ ապահովելուն պես: Այդ փուլերը նախատեսում են համաշխարհային ամենախիստ չափորոշիչների տեխնոլոգիական, խորհրդատվական, գիտական, ֆինանսական (նաև ապահովագրական), տրանսպորտային, արտադրական և այլ տիպի պահանջված գործիքների և կարողությունների ներդրումը ՀՀ-ում: Բացի այդ, ծրագրի ծավալմանը զուգընթաց այլ երկրներում ևս հիմնվելու են նմանատիպ ծրագրեր և այլ ենթակառուցվածքներ՝ հիմնական նպատակ ունենալով ՀՀ-ում արտադրված արտադրանքի, ծառայությունների արտահանման որակական և քանակական աճի ապահովումը: Բոլոր թվային տվյալները, որոնք ներկայացված են այս ամփոփագրում, ունեն ամրության մեծ պաշար, քանի որ ներկայացվածը թվեր են՝ ծրագրի ընդլայնման հոռետեսական սցենարի համար: Բացի այդ, ակնհայտ է, որ ընկերությունը ծրագրի մեկնարկի միջնաժամկետ կտրվածքում կարող է ներգրավել զգալի փոխառու միջոցներ՝ ընդլայնման տեմպերը արագացնելու համար:

30. Ծրագրի ներդրման այլընտրանքը: Հաշվարկները, ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության ներկայիս վիճակը վկայում են, որ միայն նման ծրագիրը հնարավորություն կընձեռի ժամանակակից բարձր արդյունավետությամբ տեխնիկայի ու տեխնոլոգիաների կիրառմամբ ոտքի կանգնեցնել հանրապետության փոքր գյուղատնտեսական տնտեսությունները: Վերը նշված 450 հազ. հա հողերում նշված մակարդակի մեքենայացված ծառայությունների

մակարդակ ապահովելու համար առկա իրավիճակում այլ հավասար պայմաններում անհրաժեշտ կլիներ իրականացնել ավելի քան 2 մլրդ. ԱՄՆ դոլար ներդրումներ: Բացի այդ, որպես առաջարկվող ծառայությունների որակական այլընտրանք կարող են դիտարկվել միայն 2000 հա և ավել հողեր ունեցող ֆերմաների (ընդ որում միայն որոշակի աշխարագրական տեղաբաշխում ունենալու դեպքում) առաջացումը ՀՀ-ում, ինչի համատարած տարածումը մեր սակավահող պայմաններում կհանգեցնի հսկայական, անլուծելի սոցիալական խնդիրների, հատկապես, գյուղաբնակների շրջանում: Մինչդեռ այս ծրագրի իրականացումը կարճ ժամանակամիջոցում կնպաստի նրան, որ ՀՀ գյուղատնտեսությունը ներկայիս դոտացիոն, մի կերպ գոյատևող ոլորտից վերածվի արդյունաբերական, գիտական, ֆինանսական, տրանսպորտային մի շարք ոլորտների լոկոմոտիվի դեր ստանձնած, անընդհատ և կայուն զարգացող շահութաբեր բնագավառի:

V. ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

31. Ծրագրի մոնիթորինգը նախատեսում է իրականացնել ՀՀ գյուղատնտեսության նախարարության կամ նրա կողմից լիազորված մարմնի միջոցով, ապահովելու

- 1) ներդրված միջոցների հետ վերադարձելիություն,
- 2) ներդրված տեխնիկական միջոցների ամբողջական ապահովագրությունը խոտանումից և դրանց սարքինության ապահովում մինչև սեփականության իրավունքի փոխանցումը:

32. ՀՀ գյուղատնտեսության նախարարության կամ նրա կողմից լիազորված մարմինը ընտրանքային ստուգումներ կարող է իրականացնել ծրագրի պայմաններին համապատասխանությունն ստուգելու նպատակով: Ծրագիրը իրականացնող ընկերությունը պարտավոր է պահանջի առկայության դեպքում, առնվազն 30 օրը մեկ անգամ հաշվետվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն: Հաշվետվության ձևը մշակում է ընկերությունը: Հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկատվություն ծրագրի ընթացքի մասին:

VI. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

33. ՀՀ-ում նման մասշտաբով գյուղատնտեսական աշխատանքների համակարգված մեքենայացման կազմակերպումը կապված է մի շարք ռիսկերի հետ: Մասնավորապես՝

1) ՀՀ-ում ծրագրով առաջարկված մասշտաբով, որակով և քանակով կենտրոնացված մեքենայացված ծառայություններ երբեք չեն մատակարարվել: Ավելին, նման որակի և քանակի տեխնիկայի կիրառման օրինակներ ՀՀ-ում մեզ հայտնի չեն: Ուստի բացակայում են կամ քիչ են համապատասխան ենթակառուցվածքները, մասնագետները: Ընկերությունը նախատեսում է հընթացս վերապատրաստել մասնագետներին, ստեղծել համապատասխան ենթակառուցվածքներ և այլն: Այս ուղղությամբ բոլոր հնարավոր ռիսկերը մեղմելու համար ընկերության գործունեության և զարգացման համար սույն առաջարկով ներկայացվել է հոռետեսական սցենար: Մասնավորապես վառելիքի ծախսը ընդունված է ամրության մեծ պաշարով: Արտադրողականությունը ներկայացված է հնարավորինս ցածր, որոշ ծառայություններ (օրինակ, ցրտահերկ, թմբերի պատրաստում...) որոնք միանշակ մատուցվելու են հողօգտագործողներին չեն ընդգրկվել ֆինանսական պլանում: Նախատեսված են տեխնիկայի սպասարկման մեծ ժամկետներ և փոքր պարբերություններ և այլն:

2) Առկա են ռիսկեր կապված ծրագրի մեկնարկային շրջանում ընկերության և առաջարկվելիք ծառայությունների նկատմամբ հողօգտագործողների մոտ հնարավոր անվստահության հետ կապված: Այդ ռիսկերը մեղմելու հետ համար.

ա. մեկնարկում ընտրվել են այնպիսի մշակաբույսեր և ծառայություններ, որոնք հասկանալի և ընդունելի կլինեն հողօգտագործողին և ակնհայտ որակով կնպաստեն վստահության աճին:

բ. կտարվեն լայնամասշտաբ լուսաբանման և տեղեկատվական աշխատանքներ կոնկրետ. օրինակով ցույց կտրվի գործող և նոր ծրագրերի տարբերությունը:

գ. ծառայությունների դիմաց վճարը կգանձվի միայն աշխատանքի ընթացքում և այլն:

դ. ծրագրին մասնակցությունը և ծառայության պատվերները կլինեն միայն կամավոր սկզբունքով:

ե. նախատեսվում է ընթացքում ընկերության բարձրորակ մասնագետների խորհրդատվություն և անխափան կապի հնարավորություն ընկերության հետ: Կարծում ենք, որ այս ամենը այլ գործողությունների և որակյալ ծառայությունների հետ կնվազեցնեն այս ռիսկը:

3) ներկայումս գյուղատնտեսությունում մեքենայական աշխատանքները հիմնականում իրականացվում են տեխնիկայի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական անձանց միջոցով, որոնց գործունեությունը չի հարկվում, իսկ մեքենայացված աշխատանքներով ծառայություններ

իրականացնող իրավաբանական անձինք հարկվում են, ինչը ստեղծում է ոչ հավասար մրցակցային պայմաններ:

34. Ծրագրի արդյունավետության ամրության պաշարը, մրցակցային առավելությունները, հնարավոր թույլ կողմերը բացահայտելու համար իրականացվել է մատուցվելիք ծառայությունների ինքնարժեքների զգայունության վերլուծություն բոլոր հնարավոր գործոնների նկատմամբ: Պարզվել են այն գործոնները, որոնց նկատմամբ ինքնարժեքներն առավել զգայուն են: Հստակեցվել են զգայունության միջակայքերը: Ապացուցվել է, որ այդ գործոնների ազդեցությունները մատուցվելիք նմանօրինակ ծառայությունների ցանկացած այլ ձևաչափի դեպքում այլ հավասար պայմաններում առավել մեծ ազդեցություն կունենան ինքնարժեքի վրա, քան ծրագրի իրականացման դեպքում: Կատարվել է ծրագրի արդյունավետության վրա ազդող հնարավոր ռիսկային գործոնների բացահայտում: Դրանք մեկ առ մեկ ուսումնասիրվել են, մշակվել է ռիսկերի կառավարման պլան: Պետական միջոցների ներգրավմամբ տեխնիկայի ձեռքբերման պարագայում, առկա է այդ ներդրումների վերադարձելիության չապահովման ռիսկ, ինչը կարող է պայմանավորված լինել.

- 1) տեխնիկայի խոտանմամբ (ռիսկը նախատեսվում է ծածկել տեխնիկական միջոցների խոտանման ռիսկերի ամբողջական ապահովագրությամբ),
- 2) տեխնիկայի անարդյունավետ, ոչ տնտեսավետ շահագործմամբ և որպես հետևանք պլանավորված շահույթների չստացմամբ: Այս ռիսկը մեղմվում է պիլոտային ծրագրի սահմանափակ ընդգրկման և մատուցվելիք ծառայությունների ցածր գներով և այլ աներկբա որակական առավելություններով: Բացի այդ, ամեն դեպքում տեխնիկան, որը ամբողջապես ամենաբարձր միջազգային չափանիշների համապատասխան է, լինելու է պետական սեփականություն և ունենալու է շատ բարձր լիկվիդային արժեք,
- 3) մատուցվելիք ծառայությունների նկատմամբ վճարունակ պահանջարկի սահմանափակությամբ: Այս ռիսկը նախատեսվում է մեղմել ֆինանսական հաստատությունների, ծառայություն մատուցողի և ծառայություն գնորդի միջև հնարավոր եռակողմ համագործակցությամբ, ինչն էլ իր հերթին կնպաստի ծառայության գնորդին հատկացված փոխառու միջոցների նպատակային ծախսին:

VII. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

35. Ծրագրի Պիլոտային մեկնարկի ֆինանսավորումը բաշխվելու է 2 հիմնական ուղղությամբ.

- 1) տեխնիկայի ձեռքբերման և ՀՀ-ում շահագործման պատրաստ վիճակում ունենալուն,
- 2) ծրագրի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ ենթակառուցվածքների նախապատրաստմանը:

Աղյուսակ 1. 16000 հա գարնանացան ցորենի ցանքսի մեքենայացված ծառայությունների մատակարարման համար անհրաժեշտ նախնական ներդրումները տեխնիկայի ուղղակի գնման դեպքում:

Հիմնական տեխնիկական միջոցներ (ՀՀ դրամ)	770 000 000
Վարչական և արտադրական ծախսեր (ՀՀ դրամ), որից՝	242 340 000
Աշխատավարձ	10 000 000
Գրասենյակային (տարածքի վարձակալություն, համակարգչային տեխնիկա, կապի ժամանակակից միջոցներ և ցանցի ստեղծում, կահույք, նյութեր, կոմունալ և այլն) (այդ թվում՝ օգտագործման իրավունք)	20 440 000
Արտադրական (սպասարկման) ենթակառուցվածքներ (բազայի վարձակալություն, վառելիք, նյութեր և այլն) (այդ թվում՝ օգտագործման իրավունք)	66 900 000
Տրանսպորտային միջոցների (այդ թվում՝ օգտագործման իրավունք)	48 000 000
Բեռնատարների օգտագործման իրավունք	96 000 000
Տեղեկատվական նյութերի ստեղծում և տարածում	1 000 000
Ընդամենը	1 012 340 000

36. Պիլոտային ծրագրի մեկնարկում պետական մասնակցությունը նախատեսվում է **միայն 700 մլն ՀՀ դրամ արժեքով տեխնիկայի ձեռքբերման համար**: Այս գումարով նախատեսվում է ձեռք բերել AXION 930 մոդելի (կամ համարժեք) 7 տրակտոր, ПСК մակնիշի (կամ համարժեք) 7 գութան, Ամազոն, Ռոստսելմաշ կամ այլ ընկերությունների համապատասխան հզորության ցանքս իրականացնող մինչև 4 համալիր գյուղմեքենաներ (հնարավոր է փոխելով) (գներին կարելի ծանոթանալ Հավելվածում): Մնացած մոտ 312 մլն ՀՀ դրամ (որից 70 մլն ՀՀ դրամը կկազմի այլ գյուղգործիքների տեսքով ներդրումներ, որոնք հնարավորություն կտան գութանների հիմքի վրա ստեղծել համալիր գյուղտեխնիկա) արտադրական և վարչական ծախսերը նախատեսվում է իրականացնել մասնավորի կողմից՝ առկա ենթակառուցվածքների և այլ ներդրումների հաշվին:

37. Ընկերության առաջին հինգ տարիների տարեկան ֆինանսական հոսքերին կարելի ծանոթանալ աղյուսակ 5-ում: Ըստ այդմ կարելի է տեսնել, որ նախատեսված ձևով զարգացման դեպքում ընկերությունը կարճ ժամանակում կկարողանա հասնել նախանշված և վերը հիշատակված հիմնական նպատակներին: Միևնույն ժամանակ ապահովելով, ոչ միայն պետական միջոցների հետ վերադարձը 10% շահութաբերությամբ, այլև բազմապատիկ

անգամ ավել եկամտային հարկի առաջացմանը: Այս ամենին զուգընթաց հողոգտագործողները կստանան զգալի հավելյալ արժեք առաջին հերթին հողոգտագործման արդյունավետություն և բերքատվության բարձրացման հաշվին:

VIII. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

38. Ծրագրի իրականացման արդյունքում՝

- 1) կփոխվի հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմը, այն կհագենա ժամանակակից, հուսալիորեն շահագործվող, ցածր էներգատար տեխնիկական միջոցներով.
- 2) կընդարձակվեն գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները, կբարձրանա բուսաբուծության արտադրանքի որակը և կավելանա տեղական գյուղա-տնտեսական արտադրանքի արտադրության ու վերամշակման ծավալները.
- 3) գյուղատնտեսության մեքենայացման մակարդակի բարձրացման և մատչելի սակագներով իրականացվող ծառայությունների շնորհիվ արտադրանքի ինքնարժեքում կկրճատվի ձեռքի աշխատանքի ու սպասարկման ծառայությունների դիմաց կատարվող չհիմնավորված բարձր ծախսերը, որի արդյունքում կմեծանա տեղական արտադրանքի արտահանման ծավալները և արտաքին շուկաներում դրանց մրցունակությունը.
- 4) կավելանան ոլորտից հավաքագրվող հարկային եկամուտները.
- 5) տնտեսապես կամրապնդվեն գյուղացիական տնտեսությունները և պայմաններ կստեղծվեն ոլորտում արդյունավետ ապրանքային արտադրություն իրականացնող տնտեսությունների ձևավորման ու դրանց հետագա զարգացման համար:

Առաջարկվող ծրագրի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել որ,

39. Առաջարկվող ծրագրում որոշակիացվել են այն հիմնական խնդիրները, որոնք խոչընդոտում են հողատերերին ցածր ինքնարժեքով մրցունակ մթերք արտադրելուն:

40. Որոշակիացվել են այն օբյեկտիվ պատճառները, որոնք թույլ չեն տալիս << գյուղատնտեսությունում իրականացնել բարձրորակ գյուղտեխնիկայի և տեխնոլոգիաների լայնամասշտաբ ներդրում, իննովացիոն ծրագրեր և այլն:

41. Առաջարկվել է միջոց, որը թույլ է տալիս համապարփակ, կենտրոնացված ձևով լուծել առկա խնդիրների զգալի մասը:

42. Իրականացվել է ծրագրի արդյունավետության զգայունության վերլուծություն՝ կախված տարբեր գործոններից:

43. Իրականացվել է ռիսկերի վերլուծություն և նշվել են հնարավոր ռիսկերի կառավարման և նվազեցման ճանապարհներ: Որոշակիացվել է ծրագրի հիմնական շահառուների կազմը: